



Ուժեղ եւ նորարական ծրագրերը կփոխեն մեր երկրի տնտեսական զարգացման հայեցա- կարգը



«Բնապահպանության նախարար Արծվիկ Սինսայանի նախագահությամբ օրերս տեղի է ունեցել նախարարին կից գիտատեխնիկական խորհրդի հերթական նիստը, որի ժամանակ քննարկվել են գիտնականների և գյուտարարների՝ գերատեսչությանն ուղղված առաջարկները և խորհրդի անդամների զեկույցները: Շինարար, ճարտարագետ Ս. Սահակյանը ներկայացրել է հաղորդակից անոթների օրենքի հիման վրա գետերի ջրերը խողովակներով բարձրացնելու և ավելի մեծ տարածքներում ոռոգման նպատակով օգտագործելու, ինչպես նաև մինի ջրամբարների կառուցման առաջարկները: Բանախոսը նշել է, որ իր հեղինակած նախագծերի իրագործումը կնպաստի ջրային ռեսուրսների, էլեկտրաէներգիայի խնայողությանը և գյուղական համայնքների զարգացմանը: «Մարտահրավերներ երեխաների համար՝

շրջակա միջավայրի դեգրադացման և կլիմայի փոփոխության հետևանքով» զեկույցով հանդես է եկել Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի «Էկոլոգիայի և կայուն զարգացման» ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների դոկտոր Կարինե Դանիելյանը: Նա ներկայացրել է խնդրի վերաբերյալ իր ուսումնասիրությունների արդյունքները և տվել առկա իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկներ, որոնք վերաբերում են ընդերքօգտագործման, պոչամբարների խնդիրներին, էկոկրթությանը, բնածին ռիսկերի նվազեցման ոլորտում գործունեության ակտիվացմանը և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանը:

• Ուժեղ և նորարական ծրագրեր կփոխեն մեր երկրի ՏՆՏԵԱԿԱՆ զարգացման հայեցակարգը

Սկիզբը էջ 1 /

Անդրադառնալով ելույթներում առաջադրված հարցերին Արծվիկ Մինասյանը տեղեկացրել է, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը հանքարդյունաբերության բնագավառում բնապահպանական պարտավորությունների կատարումը կանոնակարգելու և պատասխանատու հանքարդյունաբերություն ձևավորելու ուղղությամբ մեծ ծավալի աշխատանքներ է իրականացնում: Բացի այդ «Արտաքին պարտք՝ բնության պահպանության դիմաց» բանաձևի շրջանակներում նախատեսվող գործընթացների կարևոր բաղադրիչներից է պոչամբարների անվտանգության բարձրացմանը և շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված ծրագրերը: «Սակայն գերատեսչության առաջնային նպատակն է մշակել այնպիսի մեխանիզմներ, որոնք կբացառեն, կամ նվազագույնի կհասցնեն հանքարդյունաբերության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա», - շեշտել է Արծվիկ Մինասյանը և խորհրդի անդամ ու նիստին հրավիրված գիտնականներին խնդրել այդ հարցում աջակցություն ցուցաբերել՝ գիտական մոտեցումների և համալիր հետազոտությունների արդյունքների վրա հիմնված առաջարկություններ մշակելու նպատակով: Նիստում ելույթ է ունեցել նաև

Երկրների ու աշխարհամասերի հելիոֆիկացիայի ծրագրի հեղինակ, տնտեսական գիտությունների դոկտոր Վ. Համազասպյանը: Գիտնականը ներկայացրել է տեղեկատվություն հելիոֆիկացիայի ծրագրի մասին, որտեղ շեշտը դրվում է արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ արևային տեխնոլոգիաների անմիջական կիրառման վրա: Ծրագրի իրականացումը թույլ կտա փոխել Հայաստանի տնտեսության զարգացման հիմնական հայեցակարգը՝ շեշտը դնելով արևային գերեզման էներգիայի օգտագործմանը կանաչ տեխնոլոգիաների զարգացման վրա: Ամփոփելով քննարկումների արդյունքները Արծվիկ Մինասյանը հիշեցրել է, որ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը հավատարմագրվել է որպես Հարմարվողականության հիմնադրամի 25-րդ ազգային իրականացնող մարմնի և եթե կան գիտական նորարարական հենքի վրա ձևավորված գաղափարներ, որոնք ուղղված են գլոբալ կլիմայական փոփոխությունների մեղմմանը, ապա կարող են դրանք ներկայացնել ծրագրի տեսքով՝ Հանրապետության բնապահպանական խնդիրների լուծման և դրամաշնորհային միջոցների ներգրավման համար:

Գերմանական զարգացման բանկի /KfW/ առաքելության հետ

Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը հանդիպում է ունեցել Գերմանական զարգացման բանկի/ KfW/ «Կովկասում/Հայաստանում պահպանվող տարածքների աջակցություն» ծրագրի ղեկավար Անդրեաս Վեյցելի, KfW բանկի ներկայացուցիչ Թոմաս Այզենբախի և հայաստանյան ներկայացուցիչ Ջառա Չատինյանի հետ: Նախարար Արծվիկ Մինասյանը շնորհակալությունն է հայտնել Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությանը՝ մեծածավալ աջակցության համար և նշել, որ համագործակցությունը նոր որակական մակարդակի բարձրացնելու անհրաժեշտություն կա: Հանդիպմանը քննարկվել են ծրագրային ընթացիկ հարցեր: Նախարար Մինասյանը ներկայացրել է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում նախատեսվող բարեփոխումները, անդրադարձել՝ անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման քաղաքականության միասնական համակարգի ձևավորման անհրաժեշտությանը: Անդրեաս Վեյցելը շնորհակալություն է հայտնել իրականացվող աշխատանքների մանրամասն ներկայացման համար՝ նշելով, որ Հայաստանի հետ համագործակցությունը միշտ կարևոր



որել են և ներկայում նախապատրաստում են երրորդ սերնդի ծրագիր՝ «Կենսաբազմազանության աջակցության ծրագիր Հայաստանում» աշխատանքային անվանումով, որը կընդլայնի համագործակցությունը ՀՀ բնապահպանության նախարարության հետ: Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության պահպանությունը, բնության հատուկ պահպանվող տարածքների և անտառների կայուն կառավարման համակարգերի հետագա բարելավումն ու զարգացումը: ՀՀ բնապահպանության նախարարը ողջունել է փոխգործակցության ընդլայնումը, նշել, որ գերատեսչությունն ամբողջությամբ պատրաստ է շարունակելու աշխատանքները և առաջիկայում արդեն համաձայնություն է ձեռք բերվել Հայաստանի հարավային տարածքներ, մասնավորապես, Ջանգեզուրի կենսոլորտային համալիր համատեղ այցելելու ուղղությամբ, ուր և տեղում կանդորդառնան ծրագրի մանրամասներին:

Կիրառած պատժամիջոցներից ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 0,7 մլն. դրամ: Դուք գողանում կամ վնասում եք, մենք՝ բռնում, մինչեւ ե՛րբ...

ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության կողմից 19.06-23.06.2017 թթ. ժամանակահատվածում իրականացված շրջայցերի, տեսչության վարույթին հանձնված գործերի քննության և հաշվետվությունների ընդունման գործընթացում հայտնաբերված խախտումների արդյունքում կայացվել է 680,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 10 որոշում և հաշվարկվել 759,71 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Մասնավորապես՝

Բուսական աշխարհի պահպանության ոլորտ

Կազմվել է վարչական տուգանքի 4 որոշում 250,0 հազ. դրամի և հաշվարկվել է 616,71 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին պատճառած վնաս, որից՝

Լոռու տարածքային բաժնի աշխատակիցների շրջայցերի արդյունքում հայտնաբերված ապօրինի հատված 2 ծառի (բոխի) համար կայացվել է 50,0 հազ. դրամի որոշում և հաշվարկվել է 30,0 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Լոռու տարածքային բաժնի ընդհանուր «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Տաշիրի անտառտնտեսություն» մ/ճ-ի կողմից կազմված անտառխախտման արձանագրությունների հիման վրա (ապօրինի հատված 5 ծառ) կայացրել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանքի որոշում և հաշվարկվել է 56,25 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Տավուշի տարածքային բաժնի Արծվաբերդի անտառտնտեսությունից ստացված արձանագրության հիման վրա (ապօրինի հատված 2 ծառ) կայացրել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանքի 1 որոշում և հաշվարկվել է 345,96 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Սյունիքի տարածքային բաժնի ընդհանուր «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Կապանի անտառտնտեսություն» մ/ճ-ի կողմից կազմված արձանագրության հիման վրա (ապօրինի հատված 1 ընկուզենի) 1 ֆիզիկական անձի ենթարկվել է 100,0 հազ. դրամի վարչական տուգանքի և հաշվարկվել է 184,5 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս:

Ապօրինի որսի իրականացման համար՝

Հաշվարկվել է 5,0 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս (1 կաքավի ապօրինի որսի համար), առգրավվել է 100 հատ (40,0 կգ) «սիգ» տեսակի ձուկ և 1,2 կգ «կարաս» տեսակի ձուկ: Որից՝ Գեղարքունիքի տարածքային բաժնի Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ի հետ համատեղ ստուգումների արդյունքում առգրավել է 100 հատ (40,0 կգ) «սիգ» տեսակի ձուկ, որն օրենքով սահմանված կարգով հանձնել է «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին: Սյունիքի տարածքային բաժնի ռստիկանության Սիսիանի բաժնից ստացված արձանագրության հիման վրա (1 կաքավի ապօրինի որս) հաշվարկվել է 5,0 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Տավուշի տարածքային բաժնի կողմից հայտնաբերվել և արձանագրվել է 1,2 կգ «կարաս» տեսակի ձուկ, ինչը սահմանված կար-

գով հանձնել է «ՍՕՍ Մանկական գյուղ» մանկատանը:

Փայտանյութի ապօրինի տեղափոխում

Կազմվել է վարչական տուգանքի 3 որոշում՝ 300,0 հազ. դրամի և հաշվարկվել է 108,0 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս, որից՝

Տավուշի տարածքային բաժնի ԶԶ ոստիկանության Իջևանի բաժնից ստացված արձանագրության հիման վրա մեկ իրավախախտի նկատմամբ կայացրել է 100,0 հազ. դրամ գումարի վարչական տուգանքի 1 որոշում: Արարատի տարածքային բաժնի աշխատակիցների շրջայցերի արդյունքում հայտնաբերված վառելափայտի ապօրինի տեղափոխման 1 դեպքի համար կայացվել է 100,0 հազ. դրամի մեկ որոշում և հաշվարկվել է 72,0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Արագածոտնի տարածքային բաժնի աշխատակիցների շրջայցերի արդյունքում հայտնաբերված փայտանյութի ապօրինի տեղափոխման դեպքի համար կայացվել է 100,0 հազ. դրամի մեկ որոշում և հաշվարկվել է 36,0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս:

Մթնոլորտային օդի պահպանության ոլորտ

Կազմվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 50,0 հազ. դրամ գումարով, որն է՝

Շիրակի տարածքային բաժնի աշխատակիցների շրջայցերի արդյունքում առանց անթափանց ծածկոցի խճի տեղափոխման 1 դեպքի հայտնաբերման արդյունքում մեկ ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանքի ակտ:

Հողերի պահպանության ոլորտ

Կազմվել է վարչական տուգանքի 2 որոշում՝ 80,0 հազ. դրամով և հաշվարկվել է 30,0 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս, որից՝

Գեղարքունիքի տարածքային բաժնի աշխատակիցների ստուգայցերի արդյունքում հայտնաբերված հողի բերրի շերտի ապօրինի տեղափոխման դեպքի համար, ֆիզիկական անձը ենթարկվել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանքի և հաշվարկվել է 30,0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս:

Արագածոտնի տարածքային բաժնի աշխատակիցների ստուգայցերի արդյունքում հողի բերրի շերտի ապօրինի տեղափոխման համար, ֆիզիկական անձ ենթարկվել է 30,0 հազ. դրամի վարչական տուգանքի:

Վարչարարության և փորձաքննության բաժնից հաշվետու ժամանակաշրջանում դատական ակտերի հարկադիր կատարման է ներկայացրել 1 վարչական տուգանքի որոշում՝ 100,0 հազ. դրամ գումարի չափով և ՀՀ վարչական դատարան՝ հայցադիմում՝ 270,0 հազ. դրամ պատճառված վնասի գումարը հարկադիր կարգով գանձելու համար:

Ընդհանուր առմամբ նախորդ ժամանակահատվածում բնապահպանական պետական տեսչության կիրառած պատժամիջոցներից նշված ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 0,7 մլն. դրամ:



Օրեցօր խստացվում է բնության հատուկ պահպանվող տարածքների հսկողությունը



ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության տակ գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում նախատեսված ընթացակարգերով իրականացվում են պահպանմանն ուղղված միջոցառումներ: «Սևան» ազգային պարկե ՊՈԱԿ-ի պահպանության բաժնի աշխատակիցներն ապօրինի ձկնորսության վերաբերյալ կազմել են բնապահպանական խախտումների 9 արձանագրություն: Առգրավվել է 13 պոլիէթիլենային ձկնորսական ցանց, 213 «սիգ» տեսակի ձուկ և 105 խեցգետին: 91 ձուկ հանձնվել է Սևանի թիվ 3 «Հեքիաթ» ՀՊԱԿ-ին, 47-ը՝ «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-հիմնադրամ» ՊՈԱԿ-ին, 42-ը՝ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ին և 33-ը՝ Մարտունու թիվ 4 մանկապարտեզ ՀՊԱԿ-ին: Առգրավված խեցգետինը բաց է թողնվել Սևանա լիճ: «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց»-ի տնօրինության տակ գտնվող ԲՀՊՏ-ներում շարունակվում են շուրջօրյա հերթապահությունները, իրականացվում են պարբերական շրջայցեր: «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի գիտության բաժնի աշխատակիցներն իրականացրել են ստուգայցեր «Շիկահող» պետական արգելոց մասնաճյուղում, որոնց ընթացքում տարածքում հանդիպել են եվրոպական այծյամ, եվրոպական անտառային կատու, փորսուղ և շնագայլ: Ստուգայցերի ընթացքում հանդիպել են նաև կովկասյան գորշ արջի, եվրոպական այծյամի, գայլի, աղվեսի, փորսուղի,

շնագայլի, եվրոպական անտառային կատվի և եվրոպական լուսանի ոտնահետքեր: Եղանակային բարենպաստ պայմանները և կերի առկայությունը նպաստել են կենդանիների բնականոն բազմացմանը: Նման զարգացում է նկատվում գրեթե բոլոր թռչնատեսակների մոտ (խայտաբղետ փայտփոր, անտառային կաչաղակ, երգող կեռնեխ, սոսնձակեռնեխ, սև կեռնեխ, ամուրիկ, արշալուսիկ, հորբալ և այլն): ՀՀ բնապահպանության նախարարության «Խոսրովի անտառ» պետական արգելոցի աշխատակիցների կողմից «Խոսրովի անտառ» պետական արգելոց», «Խոր Վիրապ», «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրերի ամենօրյա միջոցառումները պատշաճ կատարելու համար իրականացվել են շուրջօրյա հերթապահություններ և շրջապայություններ: «Խոսրովի անտառ» պետական արգելոցի գիտական բաժնի կողմից իրականացվող գիտական ուսումնասիրություններն ուղղված են պետական արգելոցի և պետական արգելավայրերի բուսական և կենդանական աշխարհի գենոֆոնդի պահպանմանն ու նրանց էկոհամակարգերի ուսումնասիրմանը: «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, համագործակցելով Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան գրասենյակի հետ (WWF), շարունակում է տեսա և ֆոտոբեմիջների օգնությամբ կատարել կենդանական աշխարհի սեզոնային միգրացիայի և հաշվառման աշխատանքներ:



«Ձանգեզուր» կենսոլորտային համալիրում եւ «Խոսրովի անտառ» պետական արգելոցում բոլորն աջալուրջ են



ՀՀ բնապահպանության նախարարության «Ձանգեզուր» կենսոլորտային համալիրի տնօրինության տակ գտնվող ԲՀՊՏ-ներում շարունակվում են շուրջօրյա հերթապահությունները, իրականացվում են պարբերական շրջայցեր: «Ձանգեզուր» կենսոլորտային համալիրի գիտության բաժնի աշխատակիցների կողմից կազմակերպվել են ստուգայցներ «Շիկահող» պետական արգելոց մասնաճյուղում, որոնց ընթացքում տարածքում հանդիպել են 4 հատ եվրոպական այծյամ, 1 հատ փորսուղ, 1 հատ աղվես, 6 հատ շնագայլ: Թռչուններից տարածքում հանդիպել են սև կեռնեխ, սոսնձակեռնեխ, խայտաբղետ փայտփոր, կանաչ փայտփոր, արշալուսիկ, գարնանային գեղգեղիկ, անապատային մորեհավ, գյուղական ծիծեռնակ, քաղաքային ծիծեռնակ, սովորական կարմրատուտ, հոբալ, անտառային աղավնի, սովորական սարյակ, մեծ երաշտահավ, սև երաշտահավ, երկարազի երաշտահավ, երկնագույն երաշտահավ, սև ագռավ, անտառային կաչաղակ, տափաստանային ճռռակ, և անտառաբու: Թռչուններից գարնանային վերադարձ է գրանցվել գյուղական և քաղաքային ծիծեռնակների, գարնանային գեղգեղիկի և անապատային մորեհավի մոտ: Կատարվել են «Սոսու պուրակ» պետական արգե-

լավայր մասնաճյուղի տնկարանի ցանքսի շարունակական աշխատանքները: Նախապատրաստական աշխատանքներ են տարվում «Ձանգեզուր» կենսոլորտային համալիրի տարածքում հանդիպող վայրի կենդանատեսակների և թռչնատեսակների, անտառային վնասատուների և հիվանդությունների ուսումնասիրման համար: «Խոսրովի անտառ» պետական արգելոց»-ի աշխատակիցների կողմից «Խոր Վիրապ», «Գոռավանի ավազուտներ» արգելավայրերի միջոցառումները պատշաճ իրականացնելու համար իրականացվել են շուրջօրյա հերթապահություններ և շրջազայություններ:

«Խոսրովի անտառ» պետական արգելոց»-ի գիտական բաժնի կողմից շարունակում են ողնաշավոր կենդանատեսակների և գիշատիչ թռչունների կենսաէկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրման և հաշվառման աշխատանքները:

Կենդանիների պրպուլացիային և միգրացիոն ուղիներին հետևելու համար Վայրի բնության հիմնադրամի /WWF/ հետ համատեղ շարունակվում են տեսա և ֆոտոբռնիչների օգնությամբ կատարել կենդանական աշխարհի սեզոնային միգրացիային ուղղված աշխատանքներ:

«Մենք այստեղ բնապահպանական ճգնաժամ, բնապահպանական նորմերի խախտում չենք ունենալու», - վարչապետը՝ Ամուլսարի ծրագրի մասին



և Ջերմուկի միջավայրի ոչնչացման: Մեքերեց 19 բնապահպանական կազմակերպությունների այն հիմնավորումը, որ այս նախագիծը բնապահպանական հիմնավոր գնահատում չի անցել: Ապա հետաքրքրվեց, թե վարչապետի գնահատմամբ այս ծրագրի իրականացումը չի՞ բերելու հանքարդյունաբերության և զբոսաշրջության ոլորտների բախման: Վարչապետը կրկին հաստատեց նախորդ նիստին հնչեցրած իր այդ միտքը: Ապա անդրադարձավ կոմերցիոն շահի և բնապահպանական ոլորտների միավորմանը՝ նշելով, որ ողջ աշխարհը առնչվում է այս հարցերին, և աշխարհում հանքարդյունաբերությունը զարգանում է՝ բնապահպանական նորմերը պահպանելով. «Ես կարծում եմ, որ մենք այստեղ բնապահպանական ճգնաժամ, բնապահպանական նորմերի խախտում չենք ունենալու, որովհետև միջազգային էքսպերտների գնահատականներով դա հսկում ենք մենք»: Վարչապետը նաև շեշտեց, որ ներդրողը իր վրա է վերցրել ոչ միայն բնապահպանական նորմերի կատարման բեռը, նաև քայլեր է ձեռնարկելու, որպեսզի բնապահպանները, ԴԿ-ները, բնակիչները համապատասխան դժգոհություններ, կասկածներ չունենան: «Ես կարծում եմ, որ մենք այստեղ չլուծվող, բնակչին, մեզ բոլորին էկոլոգիայի տեսակետից չբավարարող լուծումներ չենք ունենալու»: Իսկ պատգամավորի այն արձագանքին, որ Ջերմուկի ջրի աղբյուրները հանքի շահագործման արդյունքում աղտոտվելու են, Կարապետյանը խոստացավ ներկայացնել նյութեր, և եթե պատգամավորը բացթողումներ կգտնի, թող իրենց տեղեկացնի:

Դիանա Ղազարյան

«Ռեպ.ամ» կայքի փոխանցմամբ՝ «Ծառուկյան» դաշինքի պատգամավոր Շաքե Իսայանը Աժ արտահերթ նիստին Կարապետյանին հիշեցրեց կառավարության նախորդ ծրագրի ներկայացման ժամանակ հնչեցրած այս միտքը. «Բնապահպանության ոլորտում մեր խնդիրն է Հայաստան աշխարհի ունիկալ բնության պահպանումը և այն վաղվա սերնդին փոխանցելը»: Այս դիտարկումից հետո պատգամավորը հետաքրքրվեց, թե ինչպիսին է վարչապետի դիրքորոշումը՝ Ամուլսարի ոսկու հանքի շահագործման հետ կապված: Իսայանը նաև ընդգծեց, որ այս հանքի շահագործումը վնասման ռիսկեր ունի Որոտան և Արփա թունելների համար, այն նաև սպառնալիք է Սևանա լճի համար, բերելու է Վայոց ձորի

Երևանի քաղաքապետարանը մտադիր է «կանաչեցնել» մայրաքաղաքը



Երևանի քաղաքապետարանն իրականացնում է «Կանաչ քաղաքի գործողությունների պլան» ծրագիրը: Ծրագրի հայտարարված նպատակն է՝ ունենալ էկոլոգիապես մաքուր քաղաք՝ մաքուր օդով, ջրով, կանաչ տարածքներով, «կանաչ» արդյունաբերությամբ, տրանսպորտով, թափոնների խելացի կառավարմամբ և բարձր էներգաարդյունավետությամբ: Ծրագիրը ֆինանսավորվել է Չեխիայի կառավարության կողմից՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) «Կանաչ տնտեսության քաղաքականության» երկխոսության շրջանակի միջոցով:

շարունակությունը էջ 7 |

• Երևանի ֆաղափառեսարանը մտադիր է «Կանաչեցնել» մայրաքաղաքը

Սկիզբը էջ 6 /

«Կանաչ քաղաքի» գործողությունների ծրագիրը ներառում է ելակետային վիճակի քարտեզագրում, բնապահպանական մարտահրավերների առաջնահերթությունների սահմանում, Երևանի ընդհանուր տեսլականը 2030 թ.-ի համար, միջնաժամկետ և երկարաժամկետ (ռազմավարական) թիրախներ, ինչպես նաև կարճաժամկետ և միջնաժամկետ գործողություններ՝ առաջնահերթություններով դասակարգված: Հունիսի 16-ին տեղի ունեցան ծրագրի 3-րդ հանրային քննարկումները: Մթնոլորտային օդի առումով նշվեց, որ ամենից մտահոգիչը Երևանի օդում փոշու մեծ կոնցենտրացիաներն են և օդի որակի որակի մասին տվյալների տվյալների սահմանափակ և անհուսալի լինելը: Ծրագրով առաջարկվում է ստեղծել օդի աղտոտման ինտերակտիվ առցանց քարտեզ՝ հիմնված օդերևութաբանական տվյալների և անշարժ ու շարժական աղբյուրներից արտանետումների տվյալների վրա: Կստեղծվի օդի որակի մշտադիտարկման և օդի աղտոտման մոդելավորման ինտեգրված համակարգ: «Մեր ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ կան որոշակի թերություններ մոնիտորինգի համակարգում՝ կապված ինչպես կայանների անբավարար քանակի հետ, այնպես էլ կապված տվյալների հավաստիության գնահատման հետ: ...Քաղաքապետարանը, ինչպես ընդունված շատ եվրոպական քաղաքներում, կարող է ունենալ իր սեփական մոնիտորինգի համակարգը», - ասաց ծրագրի փորձագետ Մարտիրոս Ծառուկյանը: Ըստ փորձագետ Դշխուհի Սահակյանի՝ առաջարկվում է «Կանաչ քաղաքի իրագրելի կենտրոն»-ի հիմնում, որի գործառնություններից մեկը կլինի կենսաբազմազանության և էկոհամակարգերի վերաբերյալ հանրային տվյալների շտեմարանի ստեղծումը: Հանրությունը նաև իրագրել կլինի զարգացման օրինաչափություններին և քաղաքի կայուն կենսաբազմազանության կարիքներին: Կզարգացվի գործակցությունը գիտաուսումնական հաստատությունների, ՀԿ-ների և քաղաքապետարանի միջև: Նախատեսվում է կանաչ տարածքների ավելացում՝ մինչև 10մ²/շնչին, սակայն առկա հողերի վիճակը և ոռոգմանը ցանցի առկայությունը սահմանափակում է իրականացման հնարավորությունը: Ծրագիրն անդրադառնում է չկանոնակարգված կառուցապատմանը: Առաջարկվում է իրականացնել Երևանի կենտրոնում հետագա հնարավոր շինարարության սահմանափակումների գնահատում: Կկազմվի Երևանի հնարավոր աղտոտված տարածքների՝ լքված արդյունաբերական տարածքների մանրամասն հաշվառման ցուցակ: «Ըրնսթ և Յանգ» ըկերության կողմից ծրագրի ղեկավար տիկին Անդրեա Չիռլիչովայի համաձայն՝ «Կանաչ քաղաքի» ծրագրի հաջող իրականաց-

ման դեպքում հասարակական տրանսպորտից կանոնավոր կերպով օգտվողների թիվը մինչև 2030 թվականը կհասնի 75%-ի: Հասարակական տրանսպորտի 90%-ը կաշխատի այլընտրանքային վառելիքով, 35%-ը՝ էլեկտրականությամբ և ջրածնով: Երևան քաղաքը կսահմանի էլեկտրատրանսպորտի սատարման միջոցառումներ և կստեղծի լիցքավորման կայանների ցանց (ԷՄՄՄ): Մայրաքաղաքը կունենա 50 կմ հեծանվագոտի 100,000 բնակչի հաշվով: Երևանի «Կանաչ քաղաքի» գործողությունների ծրագրի ազգային թիմի համակարգող Աստղինե Պասոյանը նշեց, որ Ծրագրի թիրախն է Երևանում 2030 թ.-ին հասնել CO₂-ի արտանետումների 30% կրճատման՝ 2012 թ. ելակետի համեմատ, որին հնարավոր է հասնել շենքերի և արտաքին լուսավորության համակարգում էներգաարդյունավետության միջոցառումների և վերականգնվող էներգիայի օգտագործման խթանման միջոցով: Փորձագետ Տիգրան Սեկոյանը նշեց, որ ծրագրով առաջարկվում է հիմնել «Մաքուր արտադրության» գերազանցության կենտրոն, որը կհանդիսանա փորձագիտական կենտրոն, որին կդիմեն արդյունաբերական ձեռնարկությունները, երբ ցանկանան անցնել մաքուր արտադրության: Արդյունաբերական ընկերությունների հետ կկնքվեն էներգաառդիտների կամավոր համաձայնագրեր: Ընկերությունները կամավոր կստանձնեն միջոցառումների իրականացում՝ բարելավելու իրենց տեխնոլոգիական գործընթացների արդյունավետությունը՝ կրճատելով էներգասպառումը և դրան առնչվող SO₂-ի, ջերմոցային գազերի և այլ աղտոտող նյութերի արտանետումները: Չեխական «Գեոթեսթ» ընկերության փորձագետ Բորիս Ուրբանեկը մասնավորապես նշեց, որ, ծրագրի համաձայն, 2030 թ.-ին քաղաքային կոշտ թափոնների վերամշակման ցուցանիշը կկազմի 30%-ից ավելի, այլ թափոնների համար 60%-ից ավելի: Շվեդական «ՍԿԵԿՈ» ընկերության փորձագետ Թոմաշ Մախաչը մասնավորապես նշեց, որ 2030 թ.-ին չհաշվառված ջրի ծավալը կնվազի՝ 73%-ից հասնելով 50%-ի: ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Կարինե Մովսիսյանը մի շարք հարցադրումներ բարձրացրեց՝ ջրային ռեսուրսների գնահատման և հետագա սպառման ծավալների համար բավարարության վերաբերյալ, Երևանի գլավոր հատակագծի հետ համապատասխանության անհրաժեշտության, քաղաքային ենթակառուցվածքների ֆիզիկական և առողջական ներգործությունների վերաբերյալ: Թիմի անդամները նշեցին, որ, ցավոք, Ջրային տնտեսության պետական կոմիտեում Երևանի համար նմանատիպ գնահատում չի արվել ոչ քանակական, ոչ որակական: Զգալի բացեր կան նաև հողերի և ջրերի աղտոտման արդիական և հասնելի տվյալների հետ կապված, առկա չէ մարդու առողջության վրա քաղաքային տնտեսության ներգործության քանակական որևէ համապարփակ և հասանելի գիտական հետազոտություն: Հանրային լուսնների և շահագրգիռ գերատեսչությունների դիտողությունների հիման վրա լրամշակված «Կանաչ քաղաքի» գործողությունների ծրագրի նախագիծը նախատեսվում է ներկայացնել չորրորդ հանրային քննարկման 2-3 ամսվա ընթացքում, իսկ 2017 թ.՝ ներկայացնել Երևանի նորընտիր ավագանու դատին:



Նախարարությունում նոր ձևով մտածող մարդիկ շատ չեն

Բնապահպանության նախարարության վերահսկողական գործառույթ իրականացնող Բնապահպանական տեսչությունը շուտով կլուծարվի, որին կփոխարինի նոր անկախ տեսչություն: Այս, ինչպես նաև նախարարության «ներքին խոհանոցի» և մտահոգող բազմաթիվ խնդիրների շուրջ Vesti.am-ը գրուցել է ՀՀ Բնապահպանության նախարարի խորհրդական Արծրուն Պեպանյանի հետ: Նշված խնդիրների շուրջ առաջիկայում շահագրգիռ քննարկումը շարունակելու պատրաստակամությամբ, «Բնություն» էլեկտրոնային թերթը հարցազրույցը ձեր ուշադրությանն է ներկայացնում ամբողջությամբ:

-Պարո՞ն Պեպանյան, տարիներ առաջ դուք բնապահպանության նախարարությունում աշխատել եք: Ո՞րն էր պատճառը, որ նորից վերադարձաք այնտեղ, դա անձնական ցանկություն էր, թե՞ որոշակի քաղաքական նկրտումներ կային:

-Վերադարձի պատճառը հրավերն էր նորանշանակ նախարարի կողմից, նա հաշվի էր առել, որ մինչ այդ 15 տարի աշխատել էի համակարգում: Հանդիպեցինք, տեղեկացա նախարարի ծրագրերից, որոնք ինձ համար ընդունելի էին, այդ պատճառով էլ վերադարձա նախարարություն:

-Կարելի՞ է ենթադրել, որ համակարգի համար նախարարի անձն ավելի որոշիչ է, այսինքն՝ կա լավ նախարար՝ համակարգը լավ կաշխատի, չկա՝ չի աշխատի:

-Նախարարի անձից շատ բան է կախված, բայց մեծ դեր ունի նաև այն, թե ինչպիսին է համակարգի աշխատակիցների բարոյահոգևոր մակարդակը: Ընդհանուր պատկերը միշտ էլ տխուր է եղել: 2012-ին նախարարությունից հեռանալուց ասացի, որ այն գերեզմանոց է դարձել և իր գործառույթները չի կատարում, ինչպես մյուս նախարարությունները: Այժմ տարբերակ կա փոխելու իրավիճակը, հատկապես, երբ նոր նախարարը համակարգը վերափոխելու շատ մեծ տրամադրվածություն ունի:

-Երեկ տեղեկատվություն էր շրջանառվում, որ նախարարը բավականին խիստ մոտեցում է սկսել ցուցաբերել նախարարության բնապահպանական տեսչական գործառույթներին՝ բնօգտագործման կանոնների խախտումներ, որսագողություն, ձկնագողություն, այս մասին նախարարը անձնական շահախնդիր մոտեցում է որդեգրել, ինչքանով է այն համապատասխանում իրականությանը և արդյո՞ք դա հերթական շուռն չէ:

-Որոշ ժամանակ առաջ նախարարը հայտարարեց, որ իր օրոք իրենց աշխատանքը անբարեխղճորեն կատարող մարդիկ տեղ չեն ունենա նախարարությունում: Չեմ կարծում, որ դա շուռ էր: Արժվիկ Մինասյանին ճանաչելով՝ կարող եմ ասել, որ դա ներքին ցանկություն է: Ինչ վերաբերում է տեսչությանը, ապա այն մոտ ապագայում ինքնու-

րոյն կառույց կդառնա, որի ձևավորումը մեր լիազորության շրջանակներում չի լինելու: Հույս ունենք ներկայիս տեսչությունում առկա թերությունները նոր կառույցում չեն լինի:

-Նախարարության աշխատակիցներն ամբողջությամբ կիսու՞մ են նախարարության մտահոգությունները, թե՞ որոշ իներցիոն ուժեր իրենց ակտուալությունը դեռ պահպանում են:

-Նախարարությունում նոր ձևով մտածող մարդիկ շատ քիչ են, դա մեծ խնդիր է: Մարդիկ սովոր են հին ձևով աշխատել, մեր ամենամեծ խնդիրն է՝ փորձել փոխել մարդկանց վերաբերմունքը աշխատանքի հանդեպ:

-Հայտնի է, որ շատ ՀԿ-ներ նոր նախարարի նշանակումից հետո համատեղ աշխատանքի շահագրգռվածություն և ակտիվություն են ցուցաբերում:

-Մենք նույնպես դա նկատում ենք, երևի հավատացած են, որ նախարարն անկեղծ ցանկություն ունի կարգի բերելու ոլորտը, քանի որ այն առանցքայիններից է: Մյուս կողմից մենք էլ ենք ուշադիր: Եթե ուզում ենք, որ մարդկանց մոտ փոփոխություն լինի բնապահպանական ոլորտի հանդեպ, ապա առանց մտահոգ խմբերի աջակցության չենք կարողանա լուծել այդ խնդիրը: Այս առումով շահագրգիռ ենք և քայլեր ենք ձեռնարկում այդ մտահոգ շերտերի հետ հանդիպումներ կազմակերպելու ուղղությամբ:

-Ի՞նչ ձևաչափով եք պատկերացնում համագործակցությունը հասարակական կազմակերպությունների հետ՝ ուղղակի նրանց կողմից բնապահպանական խնդիրների ահազանգում, թե՞ անմիջական մասնակցություն խնդիրների, նախարարության թերությունների վերհանման ուղղությամբ, ինչու չէ, հասարակական վերահսկողական գործառույթի իրականացում:

-Վերահսկողական գործառույթն օրենքի սահմաններում է կարգավորվում, բայց նրանք կարող են հետևել, ասիականգել: Մեզ մոտ կա հասարակական խորհուրդ, որտեղ ՀԿ-ները որոշակի պարբերականությամբ հանդիպում են անցկացնում նախարարի մասնակցությամբ և բարձրացնում են իրենց հուզող հարցերը: Առաջիկայում թե՛ այդ խորհրդին, թե՛ հասարակական ակտիվ շերտերին կներկայացնենք, թե ինչպես ենք պատկերացնում նախարարության բարեփոխումները: Պատրաստ ենք լսել նրանց առաջարկությունները: Եթե առաջներում փորձում էինք նախարարության ներքին խոհանոցը փակ պահել, որովհետև այնքան էլ մաքուր չէր, հիմա այդ խնդիրը չունենք: Մենք բաց ենք, մենք ուզում ենք համակարգը վերափոխել և ոչինչ թաքցնելու ցանկություն չունենք:

-Նախարարության տեսչության այսօրվա անձնակազմը ի գորու՞ է աշխատել այդ անկախ տեսչական մարմնում, թե՞ որոշակի սրբագրումներ արվելու են:

-Մեր նախարարությունը չի ձևավորելու տեսչական մարմնի աշխատակազմը: Չեմ կարող ասել, թե ինչ չափանիշներով են ընտրվելու կառույցի անդամները, բայց կցանկանամ այլ պատկեր տեսնել, քան ներկայիս տեսչական կառույցում է: Կադրային որակի, մտածելակերպի, վերաբերմունքի փոփոխություն պետք է լինի:

Սաթենիկ Թովմասյան
Vesti.am

Նախագիծը՝ Արծրուն Պեպանյանի
խմբագիր՝ Սանվել Սկրչյան
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝
011 818 517